ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ---------------------------------

«1»------09--------------------2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց ՊՈԱԿ 10^3 դասարան

ուսումնական հաստատության անվանումը,դասարան

Մարինե Սերյոժայի Իսկանդարյան

դասղեկի ազգանունը,անունը,հայրանունը

«2022-2003» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) *Դասարանը բաղկացած է 24 աշակերտներից, որոնցից յուրաքանչյուրն արդեն ձևավորված անհատականություն է: Նրանք տարբեր են թե բնավորությամբ և պահվածքով, թե ուսման նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքով: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ, կան նաև հետ մնացող աշակերտներ:: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ազնիվ են, անմիջական, երբեք չեն անտեսում մեծերի՝ հատկապես ուսուցիչների խորհուրդները: Դասարանի աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար, կան սոցիալապես անապահով ընտանիքներ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում կան դժվար դաստիարակվող աշակերտներ: Տարվում են համապատասխան աշխատանքներ:*

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում *Այս նպատակով նախատեսվում է կատարել մի շարք աշխատանքներ, որոնք կօգնեն աշակերտներիս լինել հայրենասեր, դաստիարակել ազգային ոգով,սիրել և պահպանել հայրենի բնությունը: Մշտապես հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, թերությունների շտկմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Այցելել պատմամշակույթային օջախներ, դիտել ներկայացումներ: Մշտական կապի մեջ լինել քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ, կազմակերպել դասախոսություններ և քննարկումներ:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն Այստեղ պետք է ծանոթացնել համաշխարհային և ազգային մշակույթի հետ , երեխաներին ներգրավել ստեղծագործական գործունեության մեջ,*ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Սովորեցնել տեսնել և գնահատել կյանքի գեղեցկությունը, աշխատանքը, բնությունը: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: *Հայրենասիրությունն ուղղակի առնչություն ունի ընտանիքի , դպրոցի, շրջապատի հետ, երբ այդ գիտելիքները դրսևորվում են տանը, դպրոցում, ընկերական շրջապատում:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Մշտապես կազմակերպել սպորտային միջոցառումներ, սպորտլանդիաներ, նաև արշավներ բնության գրկում:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն Ուրաքանչյուր դաս պետք է կառուցել որպես աշխատանքի ուսուցման դաս ձևավորելով և զ:արգացնելով ուսումնական աշխատանքի

հմտությունները: Հանձնարարություններն ու առաջադրանքները կատարելը նույնպես աշխատանք է, որ ամեն օր կատարում են աշակերտները: Եվ հենց այս տարիներին են նրանց մոտ ձևավորվում աշխատասիրությունն ու պատասխանատվությունը:Մշտապես պետք է կազմակերպել դպրոցամերձ տարածքների մաքրում, գրադարանների գրքերի և դպրոցական իրերի վերանորոգում, նաև հերթապահություն: *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը , աշխատավոր մարդը: Հարգանքի է արժանի ցանկացած աշխատանք:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Այցելել բնության պահպանության թանգարան, բուսաբանական այգի,կազմակերպել քննարկումներ տարբեր թեմաներով:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ի կիսամյակ

Ուսում-նական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
	Սեպտեմբեր		
Ի շաբաթ	➢ Ծնողական ժողովի կազմակերպում. ա)Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի իրազեկում սովորողներին և ծնողներին բ) նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների պլանավորում գ) դասարանի ծնողական խորհրդի կազմի ընտրություն դ) կազմակերպչական հարցեր ➢ Դասասենյակների նախապատրաստում ըստ հաստատված ուղեցույցի կանոնների և սխեմայի ➢ Դասագրքերի բաշխում ➢ <<Գիտելիքը ուժ է>> խորագրով դաս՝ Գիտության և դպրության օրվան նվիրված ➢ Քննարկում աշակերտների հետ. <<Սովորողի իրավունքներն ու պարտականությունները>>:	01.09-909	Դասղեկ Բուժքույր Գրադա-րանավար

II շաբաթ	➢ Սովորողների և ծնողների իրազեկում դպրոցի ներքին կարգապահական կանոններին, սովորողների իրավունքներին և պարտականություններին ➢ Զրույց՝ <<Անկախությունը՝ փայփայած երազանք և նվաճում>> թեմայով. ➢ Հանդուրժողականություն. <<Ես և իմ դասընկերները>> թեմայի քննարկում ➢ Անդրադարձ անձնական հիգիենայի կանոններին:	12.09-16.09	Դասղեկ
III շաբաթ	➢ Սովորողների և ծնողների իրազեկում աղետների և ռիսկերի նվազեցման անվտանգության կանոններին ➢ Առցանց հանդիպում-քննարկում ծնողների հետ՝ մանկավարժական միասնական պահանջի ապահովման նպատակով ➢ Զրույց <<Իմ հայրենիքի սահմանները>> թեմայի շուրջ ա) հայ հերոսների սխրանքները բ) մերօրյա հերոսները գ) <<Նամակ հայոց բանակի մեր պաշտպաններին>>	19.09-23.09	Դասղեկ
IVշաբաթ	➢ Սովորողների առաջադիմության և վարքի, հիգիենայի կանոնների պահպանման մշտադիտարկում: ➢ Անհատական աշխատանք սովորողների և նրանց ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության /հաճախումներ, ուշացումներ, առաջադիմություն/ ➢ «Օրինապաշտ քաղաքացու ձևավորումը» զրույց թեմայի շուրջ ➢ «Հայկական ավանդույթներն ու ավանդությունները» զրույց թեմայի շուրջ	26. 09-30.09	Դասղեկ
Vշաբաթ	➢ Քննարկում ուսուցիչների հետ դասարանի ուսումնադաստիարակչական խնդիրների, առկա իրավիճակի և հնարավոր լուծումների վերաբերյալ ➢ Բանավեճ «Հանդուրժողականություն» թեմայով ➢ Զրույց-քննարկում «Իմ հերոսը» թեմայի շուրջ	3.10-7.10	Դասղեկ
VI շաբաթ	➢ Սովորողների կրթական կարիքի գնահատում ➢ «Ոսկե աշուն» զրույց թեմայի շուրջ ➢ Հակահամաճարակային տեղեկատվության մասին /Քովիդ և ՍՇՎ դեմ արդյունավետ պայքարի մի քանի կանոն/	10.10-14.10	Տնօրենություն Դասղեկ

VII շաբաթ	➢ Սովորողների նախնական առաջադիմության արդյունքների ամփոփում, իրազեկում ծնողներին, առանձին դեպքերում քննարկում դասավանդող ուսուցիչների, անհատական աշխատանք ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության : ➢ «Հայրենիքի պաշտպանները» մտքերի փոխանակում ➢ «Քանակը դեռ որակ չէ նաև մարտի դաշտում» զրույց թեմայի շուրջ ➢ Գրագիտությունը տեղեկատվական դաշտում, որպես անվտանգության երաշխիք ➢ Անձնական հիգիենա	17.10-21.10	Դասղեկ
VIII շաբաթ	➢ Սովորողների առաջադիմության և վարքի մշտադիտարկում ➢ Աշնանային արձակուրդներ. ա)<<Ճամփորդությունը շարունակվում է>> խորագրով առցանց էքսկուրսիաներ Երևանի թանգարաններում և պատկերասրահներում ➢ Քննարկում <<Անվտանգ համացանց>> թեմայով	31.10-04.11	Դասղեկ
IX շաբաթ	➢ Աշակերտների կարգապահությանը վերաբերող հարցեր	07.11-11.11	Դասղեկ
X շաբաթ	➢ Աշակերտների առաջադիմությանը վերաբերող հարցեր. աջակցություն դժվար առաջադիմող աշակերտներին:	14.11-18.11	Դասղեկ, դասա-վանդող ուսուցիչ ներ
XI շաբաթ	➢ Սովորողների առաջադիմության և վարքիմշտադիտարկում ➢ Անհատական աշխատանք խնդրահարույցսովորողների հետ	21.11-25.11	Դասղեկ, զինղեկ
XII շաբաթ	➢ Զրույց՝ <<Բնական աղետները>> թեմայի շուրջ ➢ ա) Արտակարգ իրավիճակների ժամանակ կարևոր գործողությունների, միջոցառումների վերաբերյալ տեսանյութի դիտում և մտքերի փոխանակում: Աշակերտների իրազեկվածության բարձրացում բ) Գործնական իրավիճակներ	28.11-02.12	Դասղեկ
XIII շաբաթ	➢ Զրույց՝ <<Առողջ սնունդը առողջությանգրավական>> ա) տեսահոլովակների դիտում ➢ բ) Ինչպես տարբերել օգտակարը վնասակարից	05.12-09.12	Դասղեկ, Տնօրենու թյուն, դասավան դող ուսուցիչ-ներ

XIV շաբաթ	➢ Զրույց՝ <<Սուրբ Ծննդյան խորհուրդը>> թեմայով ա) Շնորհավորանքների, բացիկների պատրաստում, դասարանական անկյունների ձևավորում ➢ Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում ➢ Առաջադիմության արդյունքների վերաբերյալ հաշ-վետվության կազմում և ներկայացում տնօրենությանը	12.12-16.12	
XV շաբաթ	➢ Ծնողական ժողով աշակերտների առաջադիմության վերաբերյալ ➢ 1-ին կիսամյակում կատարված ուսումնադաս-տիարակչական աշխատանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և ներկայացում ➢ տնօրենությանը	19.12.-23.12	
	II կիսամյակ		
I շաբաթ	➢ Էլեկտրոնային օրագրերի արդյունավետությունը, հեռավար հարթակներում աշխատանքիարդյունքները ➢ Աշակերտներին ուղղորդել քայլել նորագույն տեխնոլոգիաներին ընդառաջ, գահատել հեռավար հարթակում աշխատանքի արդյունավետությունն ու անհրաժեշտությունը	09.01-13.01	Դասղեկ
II շաբաթ	➢ Սովորողների առաջադիմության և վարքիմշտադիտարկում Անհատական աշխատանք խնդրահարույցսովորողների հետ ➢ «Բարին ու Արին . . . » ➢ «Ազնիվ ու անազնիվ արարքներ» ➢ Զրույց թեմաների շուրջ	16.01-20.01	Դասղեկ
III շաբաթ	➢ Հայոց բանակի դերը մեր ապագա սերունդների գիտակցության մեջ:«Հաղթանակած հայոց բանակ» զրույց թեմայի շուրջ ➢ «Նամակ սահմանն ամուր պահող զինվորներին»	23.01-27.01	Դասղեկ
IV շաբաթ	➢ Զրույց՝ <<Տեղեկատվական պատերազ և անվտանգություն>>	30.01-03.02	Դասղեկ
V շաբաթ	➢ Հարության տոնին նվիրված զրույցներ ➢ Հանդուրժողականության դրսովորումները ➢ «Երբ աշխարհը լուռ է . . . » զրույց, քննարկումներ	06.02-10.02	Դասղեկ

VI շաբաթ	➢ Թումանյանի հեքիաթների արդիականությունը մերկյանքում ու կենցաղում: Հերոսների կերպարների վերլուծություն ➢ Գիրք նվիրելու տոնը ➢ Թումանյանի հեքիաթները աշխարհի լեզուներով ➢ Քննարկումներ	13.02-17.02	Դասղեկ
VII շաբաթ	➢ Սովորողների վարքագծի խնդիրների քննարկում ➢ «Ինչն է ինձ խանգարում լինելավելի ազնիվ» զրույց - քննարկում	20.02-24.02	Դասղեկ
VIII շաբաթ	➢ Գարունն այնքան ծաղիկ է վառել ➢ Գարնան ավետաբեր խորհուրդը	27.02-03.03	Դասղեկ
IX շաբաթ	➢ Ծնող – ուսուցիչ հարաբերությունների ուղղակիորեն ազդեցությունը աշակերտների առաջադիմության և վարքի վրա: ➢ «Ուսուցիչ-աշակերտ փոխվստահության հաստատում» զրույց թեմայի շուրջ ➢ Առակներ, իրական դեպքեր քննարկումներ	06.03-10.03	Դասղեկ
X շաբաթ	➢ Շրջակա միջավայրի պահպանումը ➢ Մաքուր պահել ոչ միայն շրջակա միջավայրը , այլնաև մեր դասարանը: ➢ Զրույց «Մեր դասարանը մեր տունն է» թեմայով	13.03-17.03	Դասղեկ
XI շաբաթ	Իմ վարքը արտակարգ իրավիճակներում. Խուճապ, թեխելամիտորոշում .տեսանյութի դիտում և քննարկում ➢ Աշակերտների կարգապահությանը վերաբերվող հարցերի քննարկում	20.03-24.03	Դասղեկ
XII շաբաթ	➢ Սովորություններ և կամք, համառություն, մերժելու կարողությունը ➢ Օգնել աշակերտներին սովորել ոչ ասել, եթե դա հակասում է իր սկզբունքներին և վնասակար է իր համար ➢ Զրույց այս թեմայով	03.04-07.04	Դասղեկ
XIII շաբաթ	➢ «Գիրք, որ ինձ սովորեցրեց ճախրել» ➢ Զրույց -քննարկում	10.04-14.04	Դասղեկ
XIV շաբաթ	➢ Ընթացիկ առաջադիմության հարցեր, խթանները և խոչընդոտները՝ արտահայտվում են աշակերտները ➢ «Ի՞նչ դեր ունի գնահատականն իմ ուսումնառության ընթացքում» զրույց քննարկում	17.04-21.04	Դասղեկ
V շաբաթ	➢ Հայաստանս երեկ,այսօր, վաղը ➢ Զրույցներ հայրենասիրական թեմաներով ➢ Անհատական և խմբային աշխատանքներ՝ ինչպեսօգտակար լինել մարդկանց ➢ Զրույց «Բազկի հարվածից լեռներն են գոռում»թեմայով	24.04-28.04	Դասղեկ

XVI շաբաթ	➢ Հաղթանակների ամիս. 15-ամյա քաղաքացիներիպատկերացումները մեր հաղթանակների մասին ➢ «Անձնական հիգիենա»	01.05-01.05	Դասղեկ
XVII շաբաթ	➢ Աշակերտների ընտանեկան խնդիրների ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա: ➢ «Մանկավարժահոգեբանական աջակցություն»թեմայով զրույց ➢ <<Աշակերտն ու ուսուցիչըգործընկերներ են, ինչու չէ նաև ընկերներ>> մտքերի փոխանակում:	08.05-12.05	Դասղեկ
XVIII շաբաթ	➢ Շրջակա միջավայրի պահպանումը ➢ Մաքուր պահել ոչ միայն շրջակա միջավայրը , այլիմ համայնքն ու դասարանը: ➢ Զրույց «Մեր դասարանը մեր օջախն է» թեմայով Հայաստանի ապագան երիտասարդների ձեռքերումէ: ➢ Քաղաքավարություն, մշակույթ, էթիկա ➢ Երիտասարդների դերը իրենց հայրենի երկրիապագան կերտելու գործում, երկրին ծառայելը պարտք է ու երջանկություն	15.05-19.05	Դասղեկ
XIX շաբաթ	➢ Քննական նախապատրաստական աշխատանքներ ➢ Ծնողական ժողով. առաջադիմության արդյունքների մասյին հաղորդում ➢ 2-րդ կիսամյակում կատարված ուսումնադաստիա-բակչական աշխատանքների վերլուծություն, հաշվետվության կազմում և ներկայացում տնօրենությանը	22.05-26.05	Դասղեկ